

Ի՞նչ է Առաջարկում CHDP-ն

CHDP ծրագիրը օգնում է կանխել կամ գտնել առողջական խնդիրները կանոնավոր, անվճար, առողջության ստուգումների միջոցով:

Ստուգումները ներառում են.

- Առողջության և զարգացման պատմություն
- Ֆիզիկական քննություն
- Անհրաժեշտ սրկումներ
- Բերանի խոռոչի ստուգում և սովորական ուղղորդում ատամնաբույժին, ս կ ս ա ծ 1 տարեկանից
- Մնուցման ստուգում
- Վարքային ստուգում
- Տեսողության քննություն
- Լսողության քննություն
- Առողջության տեղեկություն
- Լաբորատոր քննություններ, ինչպես օրինակ՝ սակավարյունություն, արյան մեջ կապար, պալարախտ և այլ խնդիրներ անհրաժեշտության դեպքում
- Մինչև 5 տարեկան երեխաների համար, Կանանց, Նորածինների և Երեխաների (WIC) ծրագրի հանձնարարում:

Ուրիշ Ծառայություններ

Եթե լրացուցիչ առողջապահական ծառայություններ են անհրաժեշտ, մենք կօգնենք ձեզ գտնել դրանք, ներառյալ՝

- Ատամնաբույժեր, ովքեր ընդունում են Denti-Cal ձեռք երեխայի ատամների խնամքի համար
- Բժշկական մասնագետներ,
- Հոգեկան և վարքային առողջության ծառայություններ, անհրաժեշտության դեպքում

Ախտորոշումը և բուժումը կարող է վճարվել այնքան ժամանակ, քանի դեռ ձեր երեխան Medi-Cal ունի:

Տեղեկություն

Դիմեք ձեր տեղական CHDP գրասենյակին, ստանալու համար՝ լրացուցիչ տեղեկություն CHDP ծրագրի, տրանսպորտային տարբերակների վերաբերյալ կան օգնություն ժամադրություն նշանակելու համար:

Լոս Անջելես մարզի կապի տեղեկություն.

Los Angeles County
9320 Telstar Ave, Suite 226
El Monte, CA 91731
Հեռախոս. (800)993-2437
Ֆաքս. (626)569-9350

City of Long Beach
2525 Grand Ave.
Long Beach, CA 90815
Հեռախոս. (562)570-7980
Ֆաքս. (562)570-4099

City of Pasadena
1845 North Fair Oaks Ave, Room 2137
Pasadena, CA 91103
Հեռախոս. (626)744-6015
Ֆաքս. (626)396-7324

Լրացուցիչ տեղեկությունների համար, այցելեք Կալիֆոռնիայի Առողջապահական Խնամքի Ծառայությունների վարչության կայքէջ՝ www.dhcs.ca.gov/services/chdp

Կանոնավոր առողջության ստուգումները պահում են ձեր երեխային առողջ:

Առողջության ստուգումները կարող են նաև գտնել և բուժել խնդիրները նախքան նրանց լրջանալը:



Edmund G. Brown, Jr.
Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Armenian

Երեխայի Առողջապահությունը և Անկարողությունը Կանխարգելող Ծրագիր (CHDP) Բժշկական և Ատամնաբուժական Ստուգումներ



ԱՆՎՃԱՐ

Նորածինների, Մանուկների, Երեխաների և մինչև 21 Տարեկան Երիտասարդների Համար Լիարժեք **Medi-Cal**-ով կամ մինչև 19 տարեկան Ցածր Եկամտով Ընտանիքների համար:

Փաստաթուղթ չի պահանջվում

Ինչու՞ Պետք է Ստուգվել

Առողջապահական ստուգումները անհրաժեշտ են բոլոր երեխաների և անչափահասների համար: Առողջապահական ստուգումների ընթացքում՝

- Գտնում և լուծվում են բժշկական, ատամնաբուժական և վարքային առողջության խնդիրները
- Ստանում են անհրաժեշտ պատվաստումները
- Հարցեր տվեք ձեր բժշկին

Առողջապահական ստուգումները անհրաժեշտության դեպքում կարող են նաև օգտագործվել խնամատար խնամքի, սպորտի, ճամբարի կամ դպրոցական մուտքի համար:

Նորածին Երեխաներ և մանուկներ Ծննդից մինչև 3 տարեկան

Կանոնավոր ստուգումները կարող են ձեր նորածին երեխային պահել ուրախ և առողջ: Դուք կարող եք պարզել ձեր երեխայի աճը, քարշն ու առողջությունը, և եթե անհրաժեշտ պատվաստումները տրվել են: 1 և 2 տարեկան հասակում, ձեր երեխան պետք է ստուգվի կապարի դեմ: Մակավարյունության քննություն նույնպես պետք է տրվի: Ձեր երեխան պետք է ատամնաբույժի տեսնի տարեկան առնվազն մեկ անգամ սկսած, 1 տարեկանից:



Ատամնաբուժական

Խնդրում ենք կապվել ձեր տեղական CHDP գրասենյակը, այնպիսի ատամնաբույժ գտնելու համար, ով ընդունում է Denti-Cal. CHDP –ն կարող է նաև օգնել ժամադրություն նշանակելու և փոխադրամիջոց ստանալու, եթե անհրաժեշտ է:

Դպրոցական Երեխաներ 4-ից մինչև 12 տարեկան

Շատ կարևոր է համոզվել, որ ձեր երեխան առողջ է և պատրաստ դպրոցի համար: Նահանգային օրենքները պահանջում են, որպեսզի երեխաները ժամանակին ստանան իրենց պատվաստումները և առողջապահական ստուգումները:

Դպրոցական երեխաները կստանան նաև տեսողության և լսողության ստուգումներ: Եթե ձեր երեխան նախկինում չի ստուգվել կապարի համար, ապա նա պետք է ստուգվի մինչև 6 տարեկան դառնալը: Ձեր երեխան պետք է ատամնաբույժի գնա տարեկան առնվազն մեկ անգամ:



Տեսողություն և Լսողություն

Տեղական CHDP գրասենյակը կարող է օժանդակություն տրամադրել, ստանալու տեսողության և լսողության ծառայություններ, եթե բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:

Ո՞վ է իրավասու

Այն երեխաները և երիտասարդները, ովքեր մինչև 21 տարեկան են, իրավասու են ստանալու Medi-Cal: Այն երեխաները և երիտասարդները, ովքեր 19 տարեկանից ցածր են և ընտանեկան եկամուտը կազմում է ավելի քան 200% Պետական Եկամտի Կանոնակարգին, նույնպես իրավասու են: Բնակության և եկամտի ապացույց չի պահանջվում:

Պատանիներ և Երիտասարդ Չափահասներ 13-ից մինչև 20 տարեկան

Անչափահասները նույնպես առողջական ստուգման կարիք ունեն: Մա հնարավորություն է, որպեսզի համոզվեք, որ ձեր անչափահասը լավ աճում և զարգանում է: Մա նաև այն ժամանակն է, որ դուք և ձեր անչափահասը բժշկին հարցեր տաք: Լրացուցիչ բժնկական ստուգումներ կարող են տրվել սպորտի և ճամբարի համար: Ձեր երեխան պետք է ատամնաբույժի գնա տարեկան առնվազն մեկ անգամ:



Հոգեկան Առողջության, Աուտիզմի և Վարքագծային Ծառայություններ Կապվեք տեղական CHDP գրասենյակի հետ, որպեսզի այս ծառայություններից օգտվելու համար օգնություն ստանաք: